

Բ. Ջուզասոյան

ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԹՂԹԵՐՈՒՄ»

11-րդ դարի առաջին կեսում, երբ արդեն հնչել էին մեր գրականության աշխարհականացման առաջին ղողանջները, երբ արդեն հրապարակի վրա էին անմահ Նարեկացու «ի խորոց սրտից» բխած հոգեզմայլ երգերը, իսկ Մերձավոր Արևելքում հուժկու թափով զարգանում էր աշխարհիկ կուլտուրան, Հայաստանում ապրում և ստեղծագործում էր Գրիգոր Մագիստրոսը՝ հայ քաղաքական ակնաւոր գործիչներից և ժամանակի բազմակողմանի զարգացած անձնավորություններից մեկը: Ճիշտ է, Մագիստրոսի չափածո երկերը չհասան Նարեկացու սրտահուլզ երգերի ոչ ոգուն և ո՛չ արվեստի աստիճանին, բայց նրա լուսավորչական եռանդուն գործունեությունը և «թղթերը» նպաստեցին մեր մատենագրության հետագա զարգացմանը:

Մագիստրոսը հայ աշխարհիկ մտավորականության այն առաջին ներկայացուցիչներից էր, որ հավատարիմ մնալով քրիստոնեական եկեղեցուն և անողոք կերպով պայքարելով աղանդավորական գաղափարների ու շարժումների դեմ, միաժամանակ առանձին խնդիրների նկատմամբ չէր բաժանում հայ կղերականության տեսակետները, նրանց վարքագիծը: Հայտնի է նրա բարձր գնահատականը հայ գուսանական երգերի ու նրանց տրված փրկարարական, այն դեպքում, երբ հայ եկեղեցին և՛ Մագիստրոսի օրոք, և՛ նրանից շատ հետո պայքարում էր դրա դեմ և ժխտում այն. «... ամենայն մրմունջք և երգք գուսանութեան...», — գրում է Գրիգոր Մագիստրոսը, — ի հայրմա առաւել քան ի յունականին գտանեմք: Քանզի չափ և կշիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայսոսիկ լոյժ չքնաղ և զժուարագիւտ և հրաշալի առասուծիւնս: Քանզի աւարտեն միով գծիւ բազում բանս, եթե գովասանութիւն և եթե պարսաւ, երբեմն երիս յաւարտին ունելով զմիմեանս բախելով և երբեմն երկուս. ևւ այսպէս ոտանաւորս ստեղծանին վեցոտանիս և քառոտանիս»:

Լավ տիրապետելով հունարեն ու ասորերեն լեզուներին, որոնցից նա մի շարք թարգմանություններ է կատարել¹, քաջատեղյակ լինելով քրիստոնեական կուլտուրային, Մագիստրոսը չի խորշել մոտիկից հաղորդակից լինելու նաև իսլամական աշխարհում զարգացող գիտությունը և, ինչպես ինքն է ասում, «բազում ջանիւ» սովորել է արաբերենը, ծանոթացել է արաբական բանաստեղծությանն ու նրա պոետիկական առանձնահատկություններին և անկողմնակալ կերպով բարձր է գնահատել այն²:

¹ Գրիգոր Մագիստրոս. «Մեկնութիւն բերականին». տե՛ս Ի. ԱժՈՒԱ. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград. 1915. էջ 32:

² Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը»: Բնագիրն հառաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 88:

³ Տե՛ս Ի. ԱժՈՒԱ, հիշ. աշխ., էջ 232: Ի. Զսեմուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Սբեան, 1934, էջ 208:

Գրիգոր Մագիստրոսը մեծ շնորհ է ընդարձակ նամակագրություն է ունեցել հայ և օտարազգի նշանավոր քաղաքական ու հասարակական գործիչների հետ: Մեղ հասած նրա նամակները պատմական ու գրական հարուստ տեղեկություններ են պարունակում և ցույց են տալիս Պահլավունի իշխանի խոր գիտելիքները ինչպես գիտություն առանձին ճյուղերի վերաբերյալ, այնպես էլ հայ ու հարևան ժողովուրդների պատմության, գրականության, բանասիրության, դիցաբանության բնագավառներում:

Մագիստրոսը քաջ իմացել է նաև պարսիկներն լեզուն ու իրանական էպոսը. Ռոստամի, Սպանդիարի, Աժդահակի վերաբերյալ նրա «Թղթերում» պահպանված մի շարք սուղ հաղորդումները, Դիոնիսիոս Թրակացու նրա ժեկնության մեջ իր իսկ վկայությունները¹, մի շարք բառերի նրա կատարած ստուգաբանությունները դա են ապացուցում:

Մագիստրոսի մոտ պահպանված իրանական վիպական զրույցների արձագանքներին տեղյակ են եղել ղեռնա նրա կյանքի ու ստեղծագործության առաջին ուսումնասիրողները. Վ. Լանգլուան «Journal Asiatique»-ում հրատարակած իր հոդվածում² համառոտակի նկարագրել է նրա «Թղթերը», ընդգծել նրանց մեջ հանդիպող հատուկ անունները, իսկ Գ. Սալաթյանը 1896 թ. այդ հատվածները գերմաներեն թարգմանությամբ հանդերձ հրատարակել է «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» հանդեսում³:

Միջնադարյան հայ գրականության մեջ իրանական էպոսի վերաբերյալ եղած հիշատակումները պարզ ապացույց են, որ Թուրանի դեմ Բրանի ժողովուրդների մղած հաղարամյա պայքարը հարազատորեն է ընկալել հայ ժողովուրդը: Չարի պարտությունը և բարու հաղթանակը իրանական վիպական երգերում ոգեշնչել է նաև հայ ժողովրդին, որը, իրանցի հերոսներին հետագայում փոխադրելով Հայաստան, ամբողջապես հարազատացրել, զարգացնացրել է, հարմարեցրել իր աշխարհըմբռնմանը, իր էպոսի ոգուն և ստեղծել «Ռոստամ-Չալ» հայ-իրանական վեպը՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի կողմնակի ճյուղերից մեկը⁴:

Իրանական էպոսից «Թղթերում» կատարված շատ սեղմ մեջբերումները հետաքրքիր են այն առումով, որ ցույց են տալիս, թե ինչպես ղեռնա 5-րդ դարից (Մովսես Խորենացի) հայ իրականությանը ծանոթ այդ վեպը ժողովրդի մեջ շարունակել է ապրել նաև հետագայում և 11-րդ դարի հայ հեղինակին հայտնի են եղել այնպիսի մանրամասնություններ, որոնք չեն հանդիպում «Շահնամում» և մեզ հայտնի իրանական այլ էպիկական պոեմներին:

¹ Եի չորիցն յայնց (իմա՝ աստղաբաշխություն, երկրաչափություն, բժշկականություն և երաժշտություն. - Բ. Չ.) միոյն մնացեալ ամբողջ, զոր առ եթիոպացիսն, զիւտի բերականութեան վասն զրչութեան և ճարտասանութեանն. վասն զատողութեան, զոր մեր բաղում փոյթ յանձին կալեալ ի սլարսկակաճէն և յիւմայիլականացն ժողովեալ զսա և մերոցն ծերոց արձարծեցաք վերսաին՝ կամ «Այսպէս բաղում պէտս է-ն ի մերս լեզու ունել, այսպէս և պարսկականին, յորմէ զայս ուսեալ ասեմք» (տե՛ս Կ. ԱՃՈՒԿ, Անուանի Փրակիսկի... էջ 233 և 235):

² Journal Asiatique, Paris, 1869, ser. VI, t. 14, էջ 5-64:

³ Chalathianz Gregor, Fragmente iranischer Sagen bei Grigor Magistros. «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» (WZKM), X band, էջ 217-224:

⁴ Տե՛ս Բ. Սալաթյանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, Պարիս, 1901, էջ 9-13: Կ. Մելիք-Օհանջանյանց, տե՛ս Ֆիրդուսի Բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին նվիրված ժողովածու, Պետհրատ, Երևան, 1934, էջ 166:

րում: Այս իսկ փաստերը հիմնովին ժխտում են Սարուխանի այն պնդումը, թե «Ռոստամի սխրագործությունները մեծ եռանդով երգվել են զանազան փոփոխություններով հալ ժողովրդի մեջ, բայց Շահնամի երևումից հետո»¹:

Ֆիրդուսին «Շահնամի» «Ռոստամի լոթ արկածները» (هفت خوارستم) բաժնի «Երրորդ արկածում» պատմում է, թե ինչպես Ռոստամը Մազանդարան գնալու ճանապարհին բախվում է մի աժդահայի՝ վիշապի հետ: Մա Ռոստամին մոտենում է զիշեր ժամանակ, կրք նա քնած է լինում, և ցանկանում է գաղտագողի ոչնչացնել զլուցազինն, սակայն Ռոստամի նժույզը՝ Ռախշը արթուն հսկում էր: Նա չուրաքանչյուր անգամ, որ վիշապը մոտենում է, ոտքերը դուրսնույլ ու խրինջոցով արթնացնում է իր տիրոջը, բայց վիշապը անմիջապես աներևութանում է: Ռոստամը սաստիկ ջղախանում է Ռախշի վրա՝ իր քունը անտեղի խանդարելու համար: Երրորդ անգամ է վիշապը մոտենում, բայց այս անգամ նա դեմ հանդիման է գալիս Ռոստամին, որի հարցին, թե նա ո՞վ է, վիշապը հոխորտալով պատասխանում է (բերենք Ֆիրդուսու խոսքերը).

چنین گفت دژخیم نر از دها که از چنگ من کس نیاید رها
صد اندر صد این دست جای منست بلند آسمانش هوای منست
نیارد پر بدن بسر بر عهاب ستاره نیند رمینش بخواب

Պժխեմ նեւը, վիշապն այն նենդ այսպես տվեց պատասխան.
«Եվ ոչ մի մարդ չի ազատվի մազիլներից իմ դաժան.
Հարյուր այսպես դաշտ, անապատ, հարյուր այսպես անդաստան,
Օղն անհատնում, կրկինքն անկզմ իմն է հար ու հավիտյան.
Արժիվն անգամ չի հանդգնի թռչել-անցնել իմ երկրով,
Աստղը կրկնում փորձ չի անի գեթ վար նայել՝ կրազով»:

Նրանք բախվում են: Ռոստամը Ռախշի օգնութլամբ ոչնչացնում է վիշապին և արյունը հոսում է գետի պես.

بزد تیغ و انداخت از تن سرش فروریخت چون رود خون از برش
Զարկեց թուրը և դեն նետեց գլուխը նեւ վիշապի,
Ինչպես դարձան վարար գետը արյունն հոսեց գաղտանի²:

Այս պատմությունը Մազհիստրոսի մոտ շարադրված է շատ սեղմ, ընդամենը մի քանի տողում. դա իր հեղինակի սիրած ոճն է, որից հազվադեպ է շեղվում: Մեզ հետաքրքրող հատվածը հետևյալն է.

«Իսկ ոմն մերձ առ Դարաւանդն կոչեցեալ լեաոն, Ռոստոմն կոչեցեալ Սաճիկ, երիվար նմա ունել ասի Ռաշ այսինքն աշխէն. և զի քնոյ էր Ռոստոմն այն, սպասէր նմա մահու Դիւզկղն. և զի ոչ կրթէք ննջէր Դիւզկղն

¹ «Հանդես ամսօրյա», 1935, էջ 19:
² فر دوسی، شاهنامه، جلد اول، بتصحيح ومقابله و همت محمد رمضان، تهران، 1312 (Ֆիրդուսի, Շահնամ, հ. 1, Թեհրան, 1934, էջ 272):
³ Անդ (Սյու հատվածների թարգմանությունը մերն է. — Բ. Չ.):
Տեղեկագիր 12—5

այն, զգուշութիւն կղեւալ Ռոստոմեայ, զոր նախն խոկալր. իսկ Ռոստոմն բո-
ղոքեալ երիվարին Ռաշին զգուշանալ. և նա միշտ ոչ ննջէր. և ի միում գի-
շերի հասանէ ի վերայ նորայ Իւզեղն. գտանէ զնա արբեալ. և իմացեալ
զայս Ռաշին, դարբ հասեալ վրնջէր, մինչ զարթուցանէր զՌոստոմ, և այս-
պէս ապրեցուցանէր»¹:

Մագիստրոսի այս պատմածում կան մի քանի մանրամասնութիւններ.
որոնք բացակայում են Ֆիրդուսու վերոհիշյալ դրվագում. նախ՝ «Շահնամեում»
որոշակի չի ասված, թե Ռոստամի ու վիշապի այս մենամարտը որտեղ է
կատարվել, մինչդեռ մեր հեղինակը այդ վայրը նշում է «Դարաւանդ» (Դա-
մավանդ) լեռան մոտ: Երկրորդ՝ Մագիստրոսի հաղորդածից պարզվում է, որ
Ռոստամի հետ մենամարտի ելած վիշապը ոչ այլ ոք էր, քան ինքը Դժոխ-
քը = Դյուզեղը: «Թղթերում» այս անունը երկու ընթերցումով է տրված՝
Իւզեղ և Իւզեղ. ըստ որում ճիշտը վերջինն է, որը պարսկերեն دوزخ
(duzax) «դժոխք» բառն է ու-ի իւ արտասանութիւմբ:

Իրանական էպոսի հերոսները բոլորն էլ համարյա մարտնչում են վի-
շապ-դեւերի հետ, որոնք այլևայլ անուններ ունեն, բայց Դյուզեղ անվան
չենք հանդիպում. «Շարբանգի պատմութիւն» (داستان شربنگ) մեջ Ռոս-
տամը կոչվում է Սպիտակ դեի (دو سپید) որդու Շարբանգի և Մագնդա-
բանի բոլոր դեւերի հետ: «Շահրիարնամեում» (شهریارنامه) Ռոստամի որ-
դին՝ Ֆարամարզը (فرامرز) իր առաջին մարտը մղում է Ռեյհան (ریحان)
անունով դեի, ապա Արժանգ դեի (ارژنگ دیو) դեմ: Այս նույն էպիկական
երկում հիշատակված են նաև Արհանգ (ارهند) և Ահրիման անուններով
այլ դեւեր²:

Մագիստրոսի վերը բերված հատվածը ավելի հստակ է դարձնում Ֆիր-
դուսու հաղորդած պատմութիւն իմաստը: Եթե «Շահնամեում» Ռոստամի հետ
բախվողը ինչ-որ պատահական վհուկ-վիշապ է (داهدا حاد), ապա այժմ
պարզ է դառնում, որ դա ինքը Դժոխքն է, չարութիւն մարմնացումը, որը
վերջնականապես պարտվում է բարու հետ մղած մարտում:

«Թղթերի» հրատարակիչ վաստակավոր բանասեր-հայագետ Կ. Կոստա-
նյանը իր ծանոթագրութիւնների մեջ գրում է. «Ռոստոմ Սաճիկի, Ռաշի և
Դյուզեղի առասպելը... մասամբ ծանոթ է Սորենացուց»³: Սակայն իրականում
Սորենացու մոտ մենք հանդիպում ենք միայն «Ռոստոմ Սագճիկ» անվանը
և այն էլ միանգամայն այլ առնչությամբ: Վերը հիշված առասպելը ընդ-
հանրապես ծանոթ չէ Սորենացուն և մեր դրականութիւն մեջ այն պահպան-
ված է միայն Մագիստրոսի «Թղթերում»: Այստեղից էլ պետք է կարկազմեմ,
որ Գրիգոր Մագիստրոսը այս առասպելը քաղել է կամ իր ձեռքի տակ կղած
ուրիշ աղբյուրներից և կամ հավանաբար լսել ու գրի է առել ժողովրդից:

Սակայն այս դեռ չի նշանակում, թե Մագիստրոսը ընդհանրապես ծա-

¹ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», էջ 126-127: Տես նաև Հայկական ՍՍՌ Պետ-
շնորհրատան (Մատենադարանի) ձեռ. № 98, թղթ. 219ր, ձեռ. № 1741, թղթ. 392ր-393ա:

² دكتور ذبيح الله صفا، حماسه سرائی در ایران، ۱۳۳۳، ص ۳۲۳
Բրիտիլյան Սաֆա. Դյուզեղեբրգութիւնը Իրանում, 2-րդ հրատ., Թեհրան, 1934, էջ 323:

³ Անդ, էջ 312-313:

⁴ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», էջ 307:

նոթ չի եղել Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» մեջ գտնվող պարսկական առասպելներին: Ընդհակառակը, մի քանի փաստեր ապացուցում են, որ նա ոչ միայն ծանոթ է եղել, այլև օգտվել է դրանցից: Այստեղ պետք է միայն ընդգծել այդ առասպելների նկատմամբ մեր երկու հեղինակների վերաբերմունքների տարբերությունը. եթե Խորենացին 5-րդ դարում, երբ Սասանյան տիրակալները ձգտում էին վերջ տալ հայ պետականության վերջին կրողներին՝ նախարարական տներին, և, հայերին զրադաշտական կրոնը պարտադրելով՝ ասիմիլացիայի ենթարկել, մի շարք քաղաքական, ինչպես և զեղարվեստական նկատառումներով չէր համակրում պարսիկներին ու նրանց հերոսներին, նրանց մասին եղած առասպելները համարելով «անլարմար և անոճ» և «անյաջ ու փցուն»¹ և դրանցից որոշները գրի էր առնում միայն իր մեկենաս Սահակ Բագրատունու ցանկությունը ի կատար ածելու համար, ապա Մագիստրոսի մոտ այդպիսի վերաբերմունք չենք տեսնում. այլ էր նրա ժամանակը և այլ նրա մոտեցումը. վերացված էր Բրանի և Հայաստանի քաղաքական հակամարտությունը, երկու երկրներն էլ տեսել էին արաբական լուծը, իսկ սելջուկյան հորդանները արդեն սկսել էին իրենց ավերիչ արշավանքները: Նման հանգամանքներում Մագիստրոսը անգամ ակնածանքով է խոսում Ռոստամի մասին և նրան նմանեցնում է Հոմերոսի Կոոնոսին, որի գլխի մազերի շարժումից անգամ ցնցվում է Օլիմպիոսը²: Մագիստրոսի այդ համակրական վերաբերմունքը արտահայտված է Ռոստամի և Դյուղեզի մեծամարտի վերը բերված առասպելին հաջորդող հատվածում, որտեղ պատմվում է Ռոստամի և Սպանդիարի (Իսֆանդիարի) պայքարի մոմենտներից մեկը.

«Եւ երբեմն ննջեալ քնուն Ռոստամ,— կարդում ենք այնտեղ,— ի վերայ հասեալ պատահմամբ Սպանդիարն անուանեալ, սպառնալը զԴարաւանդ ի վերայ նորա հսլովել: Չոր զարթուցեալ ոստազէսն ալն սոթաներն ալսինքն շարժեալ զվարսն իբրու երբեմն Կոոնոս լակնարկելն զՈղոմպիոս և ի ծալրս կօշկին արտակիտեալ ի վերջ նահանջէր»:

Ռոստամը և Սպանդիարը իրանական վեպի սիրված ու հռչակված հերոսներն են: Սպանդիարը (նոր պարսկ. Իսֆանդիար կամ Էսֆանդիար = اسفندیار) Գոշտասպ արքայի որդին է. երիտասարդ դյուցազնը, որը բազում մարտերում հաղթանակներ է տարել և հռչակվել որպես անխոցելի, ամբաստանվում է հոր գահը խլելու մտադրություն մեջ. հայրը խարդավանում և որդուն ուղարկում է Ռոստամի դեմ մարտի: Իսֆանդիարը ազնիվ է ու հավատարիմ: Նա հոր մտադրությունը չգիտե և նրան դիտում է որպես երկնային աստվածություն մարմնացումը երկրի վրա, իսկ նրա լուրաքանչյուր խոսքը՝

¹ Մովսես Խորենացու Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան, Տիգրս, 1913, էջ 89 և 114 (հետադաշտ մովսես Խորենացի...):
² Տե՛ս Հոմեր, Իլիական, թարգմ. Ա. Բագրատունի, Վենետիկ, 1893, էջ 16:
³ Գրիգոր Մագիստրոսի «Թղթեր», էջ 127: Այս և վերը բերված հատվածը Կոստանյանի հրատարակության մեջ անմիջականորեն հաջորդում են իրար և տպավորություն է ստացվում, որ դրանք միևնույն գրույցի տարբեր մասերն են, մինչդեռ դրանք տարբեր գրույցների առանձին բեկորներն են. և յուրաքանչյուրը պետք է ներկայացվի առանձին, այլ կերպ ասած՝ «Եւ երբեմն ննջեալ քնուն Ռոստամ...» հատվածը պետք է սկսվի նոր պարբերությամբ:

աստվածային անառարկելի կարգադրություն: Իսֆանդիարը ոչ մի թշնամութուն չի տածում Ռոստամի նկատմամբ, ընդհակառակը՝ նա իր ականածանք ունի դեպի Իրանի այդ անպարտելի հերոսը, ուստի, երբ նրանք հանդիպում են՝ Իսֆանդիարը Ռոստամին բարեկամարար առաջարկում է առանց կռիվի, լուր ձեռնադրեն, հանձնվել իրեն, որպեսզի ինքը հոր առաջ հրամանագանց չլինի, որից հետո էլ խոստանում է Ռոստամին ազատ արձակել, հակառակ դեպքում ինքը ստիպված կլինի Ռոստամի նկատմամբ բռնություն պործադրել: Ռոստամը, որ իր հերթին նույնպես հարյուր է Իսֆանդիարին, չի ընդունում նրա առաջարկությունը՝ գլուցազնի համար նվաստացուցիչ համարելով առանց մենամարտի հանձնվելը: Ռոստամը Իսֆանդիարի հետ ունեցած բարեկամական զրույցների ժամանակ հորդորում, աշխատում է համոզել, որ նա հետ կանդնի իր սին մտադրությունից, բայց նա անդրդվելի է:

Մենամարտից խուսափելու երկուստեք ջանքերը զուր են անցնում: Նրանք բախվում են: Երկարատև մենամարտում Ռոստամի ուժերը ջլատվում են, բայց Սիմորդ թռչունը օգնություն է հասնում. Ռոստամը նրանից իմանալով, որ Իսֆանդիարի մարմնի միակ խոցելի տեղը աչքերն են, նրա իսկ խորհրդով մորմենու փախտից պատրաստված երկսայրի նետով սպանում է երիտասարդ Իսֆանդիարին և երկար ժամանակ ողորում նրա մահը:

Ռոստամի և Իսֆանդիարի կռիվը, «Շահնամեից» ավելի համառոտ, պատմված է նաև հայ-քրդական «Ռոստամ և Ատամբժի ու Դյուրո» վեպում¹, որտեղ նկարագրված դեպքերը շատ պակասով համընկնում են «Շահնամեի» փաստերին: Անհավանական չէ, որ այս վեպը ֆիրդուսուց անցած լինի ժողովրդին:

Ենուս ֆիրդուսուց առաջ այս վեպի մշակմանը ձեռնարկել էր 10-րդ դարի բանաստեղծ Դադիդին (վխճ. 975 թ.): Ֆիրդուսին իր «Շահնամեի» համապատասխան բաժնում ամբողջությամբ բերում է այդ հատվածը և ավարտում այն, որը կիսատ էր մնացել Դադիդու սպանությունից պատճառով:

Սպանդիար անունը Սպանդարատ, Սպանդիատ ձևով, որպես հայկական անձնանուն, օգտագործված կա մեր մատենադրության մեջ (տե՛ս Մովսես Խորենացի, Գ, լա, լգ, լե, լը, խզ, խզ, Փալստոս Բուզանդ, Դ, ժթ և այլն): Այս անվան հին պարսկերեն ձևն է՝ *Spantādata = զնդ. Spāntōdato «սրբատուր» նշանակությամբ, իսկ միջին պարսկականը՝ Spandyat², նոր պարսկ. Իսֆանդիար կամ Էսֆանդիար — اسفندیار, հայ-քրդական «Ռոստամ և Ատամբժի ու Դյուրո» վեպում պործածված է Ասֆանտիար ձևով:

Սովետական արևելագետ Ի. Ս. Բրադինսկին այն կարծիքին է, որ իրանական էպոսում «Ի դեմս տարբեր գլուցազունների՝ կարելի է տեսնել արևել-

¹ Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե, «Հայ-քրդական վեպ», հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա—Վաղարշապատ, 1904, էջ 14—17:

² ۱۹۰-۳۷۵، تهران، جلد ۳، شاهنامه، فرتوسی، ریونلی. Շահնամե, հատ. 3, Թեհրան, 1933, էջ 190—375):

³ Տե՛ս 2. Անտոյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, 1948, էջ 598: և Աղոնց, Բագրատունիների փառքը (տե՛ս նրա «Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1948, էջ 111): Mary Boyce, Zariadres and Zarer, BSOAS, 1955, vol. XVIII, p. 3, էջ 473:

⁴ Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ե, 1904, էջ 14—17:

լա-իրանական տարբեր ցեղերի ու ժողովուրդների (народностей) ավանդը, ըստ որում Ռոստամը՝ առավելապես սակո-սոգդիական շրջանների, Իսֆանդիարը, Ջարերը, Գոշտասպը, կավաիդները (քայանիդները) և զրանց նախորդները՝ հավանորեն բակտրիական և մասամբ սոգդիական¹:

Այս ենթադրության համար հավաստի վկայություն է նաև Սերեոսի հաղորդումը Սպանդիարի (Սպանդիատ հորջորջումով) մասին: Սերեոսի մոտ Սպանդիարը նույնպես դիտված է որպես միջինասիական «քաջ» դյուցազն: Այս հաղորդումը մեր մատենագրության մեջ Սպանդիարի մասին եղած առաջին հիշատակությունն է: Սերեոսը, խոսելով Վահրամ Մեհրևանդակի միջինասիական նվաճումների մասին, գրում է, որ նա՝ հասնելով Վահոտ (իմա՝ Ամու Դարյա) գետին, «զանց արար յայնկույս նիզակի քաջին Սպանդիատայ զորմէ ասեն բարբարոսքն, և թէ հասնալ նա պատերազմաւ մինչև ցայս վայր, ցցնալ զնիզակ իւր ի գետնին»: Եղանակում է Մազհիստրոսից ու Ֆիրդուսուց ղևա շատ առաջ, 7-րդ դարում, Իսֆանդիարը հայ իրականության մեջ հայտնի էր որպես միջինասիական-իրանական հերոս:

«Շահնամում» տասնյակ էջեր են նվիրված Ռոստամի ու Իսֆանդիարի բանավեճին ու մենամարտին, թալս Մազհիստրոսից վերը բերված էպիգոզը բացակայում է այնտեղ, և ընդհանրապես Իսֆանդիարը «Շահնամում» գործում է Արևելքում, և ոչ մի խոսք չկա Գեմավանդ լեռան մասին:

Ըստ երևույթին էպոսի տարբեր պատումները, Արևելքից՝ Միջին Ասիայից և Խորասանից շարժվելով դեպի Արևմուտք, աստիճանաբար տեղայնացել են և Սպանդիարի գործունեության վայրերը Արևելքից փոխադրվել են Արևմուտք: Սա են ապացուցում նաև ԼՁ թղթում պահպանված փաստերը, որտեղ հեղինակը հիշում է հասարակությունից վտարված և լեռների վիհերում շղթայված երեք կերպարներ՝ Բյուրասպի Աժդահակ, Սպանդիար և Արտավազ:

«Գիտեմ, — գրում է Գրիգոր Մազհիստրոսը, — և զԻւրասպի ի լեռոն Դարաւանդ, որ է Կենտոտոսն Պոիւղայ: Ոչ մոտացայց զՍպանդիարն ի Սաբալանին կալով լերին, կամ զմեր Արտավազ ի ծալրս Ալլարատեայ ի Մասիքոհն»²:

Բյուրասպի առասպելը այստեղ ամենայն հավանականությամբ վերցված է Խորենացուց, որի պատմության «Ի պարսից առասպելաց» բաժնում Բյուրասպի Աժդահակի հավաստի անունը «Կենտաւրոս Պոիւղայ» (այլ ձևագրում՝ Պոիւղայ, Պոիղայ) է հաղորդված³: Այս փաստը մեզ հայտնի և ոչ մի այլ աղբյուրում չկա, այդպիսի նույնացման չենք հանդիպում նաև Շահնա-

¹ Н. С. Брагинский, Из истории таджикской народной поэзии, М., 1956, стр. 124.

² Սերեոսի եպիսկոպոսի պատմություն: Բաղդատու թեմար ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 34:

³ Գրիգոր Մազհիստրոսի «Թղթեր», էջք 90—91: Թեև Իսֆանդիարը նույն պարբերության մեջ երեք անգամ լեռ բառը չկրկնելու համար այստեղ օգտագործել է պարսկերեն բոհ = ۰ ۵ (լեռ) բառը, իսկ հետագայում որևէ դրչի անուշադրության հետևանքով Մասիս անունից ս-ն բնկել է և ստացվել է Մասիքոհ: Հնարավոր է նաև, որ Մազհիստրոսը այստեղ կիրառած լինի իր խրթնարան ոճը՝ Մասիս լեռը Կապկոհի (Եղիշե, 1957, էջ 78) և այլ նման բարդությունների համանմանությամբ դարձնելով Մասիքոհ:

⁴ Սովսես Խորենացի, էջ 91:

մեռում¹: Ելնելով սրանից, և այն, որ Մազիստրոսը լավատեղյակ էր Թորենացու պատմությանը², կարող ենք ասել, որ նա այս տեղեկությունը քաղել է Թորենացուց: Ինչ վերաբերում է Սպանդիարի Մարալան լեռան մեջ փակված լինելուն, ապա այդ մասին ևս այլ աղբյուրներում տեղեկությունների չենք հանդիպել:

Մարալան լեռան մասին «فرهنگ ارجمن از ای صاصی»-ում հետևյալ հետաքրքիր ժողովրդական զրույցն է հաղորդված. «Մավալանը հին մարգարեներից մեկի և Արդարիից երեք ֆարսախ հեռավորության վրա գտնվող այն լեռան անունն է, որը իշխանավորների բնակավայրն է: Իսլամից առաջ և հետո այնտեղ ճգնավոր և աստվածավախ մարդիկ են ապրել: Մոզերը այդ վայրը այնպես սուրբ ու մաքուր են համարել, որ երգվել են նրա անունով: Ասում են այդ լեռան վրա մի խոր լճակ էլ, որը ձմեռը լիքն է լինում ձյունով ու սառույցով, իսկ լճակի մեջ քնած մարդու մարմնի նմանող մի հսկա արձան կա: Ենթադրել են, որ դա վերոհիշյալ մարգարեն է»³:

Ինչպես ասացինք, Սպանդիարի (Իսֆանդիարի) անունը Մարալան լեռան հետ կապելը կարելի է էպոսի տեղայնացման փաստերից մեկը դիտել: Մարալան լեռը շատ մոտ է Հայաստանի սահմաններին, գտնվում է ներկայիս Իրանական Ալբրեջանի արևելյան մասում: Հավանաբար այստեղ Սավալան-Մարալան մարգարեին վերաբերող զրույցը միաձուլվել է իրանական էպոսի առանձին մի փաստի հետ, իսկ Մազիստրոսը օգտվել է դրանից:

Հայաստանի մերձակա երկրներում ո՛չ միայն տարածված են եղել իրանական էպոսի առանձին զրույցների տարբեր պատումները, այլև եղել է Սպանդիարի պաշտամունքը, սրա մասին նույնպես հիշատակություն կա Մազիստրոսի թղթերից մեկում, որտեղ նա հարուստ տեղեկություններ է հաղորդում տարբեր ժողովուրդների մեջ ընդունված ծառերի պաշտամունքի մասին: Մազիստրոսը գրում է. «... մայր Մարալանի, զորմէ ասեն Պարթևք երից քաղաքաց լոստոցն կերտացեալ, իսկ արմատ և միջոց նորա ի վէմ լեղափոխեալ, Սպանդիարա զնա կանգնեալ արձան»⁴:

Մազիստրոսի այս հաղորդումը համահնչյուն է հոների մեջ ընդունված Սպանդիարի (տվյալ դեպքում Ասպանդէատ ձևով) պաշտամունքի մասին Մովսես Կաղանկատվացու բերած փաստերին: Ըստ Կաղանկատվացու՝ հեթանոս հոները, որոնք երկրպագում էին արեգակին ու լուսնին, զոհաբերություններ էին անում կրակին ու ջրին⁵, միաժամանակ պաշտում էին Թանգրի խան (= երկնային թագավոր⁶) աստծուն զորո պարսիկք Ասպանդէատ կոչված և նրան ձոնված կաղնի ծառը. «Եւ քանզի,— հաղորդում է Կաղան-

¹ Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս մեր հոդվածն՝ «Բյուրասպի Աժդահակի առասպելը ըստ Մովսես Թորենացու», Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտ.), 1958, № 1, էջ 70:

² Տե՛ս Գրիգոր Մազիստրոսի «Թղթերը», էջ 9, 24, 63, 84:

³ WZKM, 1898, band XII, էջ 232:

⁴ Գրիգոր Մազիստրոսի «Թղթերը», էջ 220:

⁵ Մովսեսի Կաղանկատվացու Պատմություն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, էջ 101 և 106:

⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանցի ծանոթագրությունը «История Епископа Себеоса». Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц. Ереван, 1939, էջ 154:

⁷ Մովսեսի Կաղանկատվացու Պատմություն Աղուանից, էջ 101:

կատվացին,— ի վարսաւոր ծառոց կաղնեաց բարձրագունից, զորս ձօնեալ էին Ասպանդիատայ գարշելու առ ի զոհս մատուցանելու նմա ձիովք, զորոց զարիւնն հեղուին զծառովք և զզլուին և զկաշին արկանէին զոստովք ծառոցն հրամայէր եպիսկոպոսն (խոսքը հոնների մեջ քրիստոնեութուն տարածող Իսրայել եպիսկոպոսի մասին է. — Բ. Չ.) հատանել զմին, որ զլուի և մայր էր տլլ ամենայն ծառոց և համարէին զնա աստուածոցն փրկիչ և կեցուցիչ տուող ամենայն բարեացք¹:

* * *

Գր. Սալաթլանցը իրանական առասպելների ֆրագմենտներից է համարել նաև Թոռնիկ Մամիկոնյան իշխանին Մագիստրոսի գրած նամակում (Թուղթ ՀԵ) բերված հետևյալ գրույցը, ինչպես և Ձ թղթի տեղեկությունը Բավարդանի մասին²:

«Իսկ ի Փիսոփն սքանչելեացն հանդիպիս. հարճ արքային Սոսրովու, քանդի սա ատեցեալ տարապարտ լումեմնէ ի հարճից արքայի, կիւսոյ հնարիւք քսութեան մատնեալ: Իսկ նորա առ եզերքն Փիսոփնի լայր կականմամբ դոր ելեալ ձկան երեալ նմա, Աշդահակ կոչեցեալ և լոնլայն ի զոգ նորա ժայթքեալ մարդարիտ մի, երկտասան կշիռ ունելով նմա սատեր: Եւ առ ժամայն ծանեալ, եթե ի դիցն ազդմանէ եղև ողորմութիւնն այն, և մատուցանէր զչքնաղն զայն և զսխրալին և զհրաշալի սպիտակափառ և զականակիտ արքայի: Ջոր, սքանչացեալ ընդ սխրալին զարմանալին, զնէ ի ծայրս գագաթան թագին իւրոյ, զոր Եզդադովսն կոչեն, այսինքն աստուածատուր և զհարճն զայն առաջին ամենայն կանանց իւրոց հրամայեաց կարգել, և զդիսն մեծաւ պատարագօք պատուել, իսկ զնկարագրութիւնն ձկանն այն Աշդահակ կոչեցեալ, ի դիսն նկարագրել և առ եզերք գետոյն Փիսոփնի զոհել ի տեղւոջն այն»³:

[Իսկ Փիսոփնում հանդիպում ես հրաշքների, Սոսրով արքայի հարճը, որովհետև արքայի հարճերից մեկի կողմից անմեղ տեղը ատվում էր, վնակի հնարքներով ամբաստանվեց: Իսկ նա Փիսոփնի ափին լաց ու կոծ էր անում: Աշդահակ կոչվող ձուկը զուրս է գալիս, երևում նրան, և լոնլայն [բերանից] նրա զոգը մի մարգարիտ է գցում, որ 12 սատեր կշիռ ուներ: Եվ [հարճը] իսկույն իմացավ, որ այն ողորմությունը աստվածների թելադրութամբ եղավ և այն չքնաղը, հիանալին, հրաշալին, սպիտակափառը և հստակափայլը մատուցում է արքային, որ սքանչանալով այդ հիանալի և զարմանալի [մարգարտի] վրա, զնում է իր թագի գագաթին, որ Եզդադովսն, այսինքն՝ աստվածատուր են կոչում և հրամայեց իր կանանցից ամենաառաջինը կարգել այն հարճին, և աստվածներին մեծ նվերներով պատվել, իսկ Աշդահակ կոչվող ձկան կերպարանքը աստվածների մեջ քանդակել և Փիսոփն գետի եզերքին այն տեղում զոհ [մատուցանել]:

Այստեղ հիշատակված Աշդահակ Ա.ժդահակ ձուկը բանասիրության մեջ մի շարք ենթադրությունների առիթ է տվել:

¹ Մովսեսի կաղանկատուացույ Գատմութիւն Աղուանից, էջ 198:

² Բավարդանի գրույցը քննության շնորհիւ առնում բավարար նյութեր շունենալու պատճառով:

³ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», էջ 216, տե՛ս նաև Մատենագարանի ձեռ. № 98, թղթ. 179ա., ձեռ. № 1741, թղթ. 342ա.:

Վ.ս. Միլլերը, Մոսկվայի արխեոլոգիական ընկերության 1896 թ. դեկտեմբերի 3-ին կայացած նիստում հաղորդում անելով Գր. Պարաթյանցի հրապարակած իրանական առասպելների այս հատվածների մասին, կարծում է որ վերը բերված դրույցում անդրադարձում է գտել ձկան աստվածության մասին քաղղեա-իրանական ինչ-որ ասք, սորը հատկապես տարածված է եղել Միջագետքում, որտեղ հայազգի իշխան գիտնական Գրիգոր Մանսուրը շատ տարիներ է անցկացրել»¹:

1907 թ. Կեդամա լեռներում Յա. Սմիռնովը հայտնաբերեց քարե հսկա կոթողներ, որոնց գտնվելու վայրը հայերը կոչում էին Վիշապներ, իսկ քրդերն ու ազրբեջանցիները՝ Ածղահա-յուրտ: Այդպիսի քարակոթողներ հայտնաբերվեցին նաև Թոխմախ-գյուղում, Գյուլ-լուրտում, Իմիրգեկում, 1927 թ. Սևանա լճի հյուսիս-արևելյան կողմում, իսկ հետագայում նաև՝ Արագածի հարավային լանջին, Համբերդի շրջանում, ինչպես նաև Կրաստանում (Ախալ-քալաքի մերձակալքում, Թուրաթիան գետի մոտ՝ Գանձա գյուղում և Խրամ գետի մոտ՝ Շիպլակ Սանամեռ գյուղում):

Հայտնաբերված քարակոթողների մի մասը ձկան կերպարանք ունենալով, իսկ մի մասի վրա էլ քանդակված էին եղան կամ խոլի գլուխներ՝ կախ ընկած կաշվով և առջևի ոտքերով: Այս հուշարձանների վերաբերյալ ընդարձակ գրականություն է ստեղծվել, որտեղ քննարկվել են դրանց գեղարանական բնույթը, որ աստվածության արտահայտիչ լինելը²:

Յա. Սմիռնովը այս քարակոթողների վերաբերյալ իր հաղորդման մեջ նշում է, որ տարբեր ժողովուրդների մոտ ձկան կրոնական ու սիմվոլիկ նշանակության վերաբերյալ եղած լայնածավալ գրականության մեջ իրեն չի հաջողվել հանդիպել ձկան կերպարանքի նման նկարագրության: Ըր փնտրատուքների ընթացքում քարե ձկների պաշտամունքի մասին առաջին հիշատակությունը Սմիռնովը, ի վերջո, գտել է Գր. Մագիստրոսի մոտ: Նա, նկատի ունենալով հայտնաբերված քարակոթողների վիշապ-ածղահա անվանումը և Մագիստրոսի վերոհիշյալ թղթի տվյալները Աշգահակ ձկան մասին, չի համաձայնվում Վ.ս. Միլլերի կարծիքի հետ: Յա. Սմիռնովը հավանական է համարում, որ Հայաստանի Կեդարքունյաց շրջանում երկար տարիներ ապրած Գրիգոր Մագիստրոսը տեղյակ է եղել ձկնատեսք այս արձանների գոյությունը, որի և արձագանքն է վերը բերված առասպելը: Իսկ Սմիռնովը իրեն ի վիճակի չի համարում պատասխանելու այն հարցերին, թե Մագիստրոսը Փիսոփն գետի անվան տակ որ գետն է նկատի ունեցել, — արդյոք

¹ „Древности восточные“, т. II, вып. 2, 1901, էջ 134:

² Տե՛ս Н. Марр, Я. Смирнов, Вишавы, 1931: ն. Աղոնց, Հին հայոց աշխարհայացքը, տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1948, էջ 293: Բ. Բ. Пуотровский, Вишавы, каменные статуи в горах Армении, Ереван, 1939. Պրոֆ. Գր. Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Ասողիկ-Գերկեսո գիցուհու արձաններ, Երևան, 1941: Գր. Լափանցյան, Հնություն մի քանի հիշատակարաններ, «Արարատ», 1914, էջ 91—98: Փա. Լափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1911, էջ 111—154: Գր. Капанцян, О каменных стеллах на горах Армении, Ереван, 1952. Աս. Մնացականյան, «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի գեղարանության մասին, Հայկական ՍՍՏ ԳԱ Տեղեկագիր (հասարակ. գիտ.), Երևան, 1952, № 5: Աս. Մնացականյան, Հայկական դարձարվեստ, Երևան, 1955, էջ 65, 122, 547—557:

³ Н. Марр и Я. Смирнов, Вишавы, 1931, стр. 76.

Արա՞քսը, և հիշված Սոսրովը «կիսահնքիաթալին» Սոսրով Սասանյա՞նն է, թե չէ՞ հավական Սոսրովը՞:

Պրոֆ. Մ. Արեղյանը իր «Վիշապներ» աշխատության մեջ հանդամանորեն ժխտում է Յա. Սմիռնուլի ենթադրությունը, թե իբր Մազիստրոսը ծանոթ է եղել Գեղարքունիաց լեռների քարակոթողներին և ինչ-որ կապ պիտի տեսնել Մազիստրոսի հիշած Աշղահակ ձկան և վերջինների միջև: Արեղյանը ցույց է տալիս, որ՝

1. Հայտնաբերված քարակոթողները վիշապ-աժդառնու են կոչվել ոչ թե ձկան կերպարանք ունենալու համար, այլ իրենց չափազանց մեծ, վիթխարի տեսքի պատճառով, ինչպես սովորաբար հայերենում ընդունված է ասել աժդահա մարդ, աժդահա քար, վիշապ քար¹: Արեղյանի այս փաստարկին կարելի է ավելացնել նաև այն, որ պարսկերենում ևս դեռևս շատ վաղ ժամանակներից աժդահա օգտագործվել է «հակա» նշանակությամբ:

2. Մազիստրոսը տվյալ դեպքում թիր սիրած անսովոր ու խրթնարան ոճով, սովորական «վիշապ» բառի փոխանակ «աժդահակ» է գործածել²:

3. Մազիստրոսը իր այս թուղթը գրել է այն ժամանակ, երբ հունաց կայսրի կողմից կարգված էր Վասպուրականի, Տարոնի, Մանազկերտի, Արճնի, Բերկրիի և Միջագետքի բզեշխ: Թուղթը հասցեագրված է Մուշեղ Մամիկոնյանի որդի Թոռնիկին, որը Մազիստրոսի փեսան էր և նրա իսկ կողմից նշանակված Սասունի իշխան³:

4. Փիսոփս գետը «Աստվածաշնչի» մեջ հիշատակված գրախտի չորս գետերից մեկն է (Մճնդոց, Բ. 11), որը ըստ Մովսես Սորենացու «Աշխարհացույցի» Գանգես գետն է՝ Այստեղից էլ պրոֆ. Արեղյանը պատմված դեպքերի վալրը փոխադրում է Հնդկաստան⁴:

Ջրույցի մեջ օգտագործված հատուկ անունների հանդամանալի քննությունը մեզ ավելի շատ կովաններ է տալիս այն համարելու միջինասիական-իրանական մի գրույց՝ կապված պարսից արքա Սասանյան Սոսրով Ի (Ապրուեզի) անվան հետ:

1. Հանրահայտ է, որ Մազիստրոսը մեր մատենագրության ամենախրթնարան հեղինակներից է, որ նա շատ հաճախ դիտավորյալ կերպով, ըստ երևույթին, ժամանակի սովորությունից ելնելով, գրում է բարդ հանելուկային լեզվով, այնպես որ անգամ նա իր գրած «Գամակտական» թարգմանած է եղել ավելի պարզ ու հասկանալի գրաբարի. այս թարգմանության մի հատվածը ժամանակին հայտնաբերեց Նորայր Բյուզանդացին, իսկ բանաստեղծության լրիվ լուծումը տվեց Գ. Մենեիշյանը: Մազիստրոսի նման դժվարընկալելի ստեղծագործություններից մեկի՝ Մրգուզ Փանաքի լուծումը տվել է պրոֆ. Ն. Աճառյանը⁵:

¹ H. Mapp u. N. Smirnov, Вышапы, 1931, стр. 75.

² Մ. Արեղյան, Վիշապներ, 1941, էջ 45:

³ Անդ, էջ 54:

⁴ Անդ, էջ 58: Տե՛ս նաև Մազիստրոսի «Թղթերի» Կ. Կոստանյանի ծանոթագրությունները («Թղթեր», էջ 312):

⁵ Անդ, էջ 58:

⁶ Անդ, էջ 59:

⁷ Տե՛ս Գ. Մենեիշյան, Գրիգոր Մազիստրոսի «Գամակտական» ամբողջական լուծումը, Վիեննա, 1912, Ն. Աճառյան, Մրգուզ Փանաքի լուծումը, «Հանդես ամսօրյա», 1923, էջ 241-250:

Գրիգոր Մագիստրոսը նման հանելուկային, բայց նվազ խրթին ոճ է օգտագործել և այս թզվածում:

2. Ինչպես վերը նշվեց, պրոֆ. Արեղյանը գիտել է, որ Փիսոփնը «Աշխարհացույցում» Գանգես գետն է համարվում: Նման տեղեկություններ են հաղորդում հին աշխարհի և այլ մատենագիրներ¹: Սակայն հայկական մի քանի ձեռագրերում Փիսոփնը նույնացված ենք գտնում նաև Ինդոս ու Վեհոտ գետերի հետ. մի ճառարների 1280—1286 թթ. օրինակից արտագրված ձեռագրում Փիսոփն գետի մասին ասված է «ի չորս սկանց ելանէ, որ է բերան հրոյ, բերանոյ ալլալութեան, Գանգէս, Վեհոտ»²: 1756 թ. արտագրված «Վարդանայ հաւաքումն մեկնութեանց շին կտակարանի» ձեռագիր օրինակում Փիսոփն գետի մասին ասված է, թե «Հնդիկք Գանգէս կոչեն և պարսիկք Վեհոտ, յոչնք Ինդոս»³:

Որ Փիսոփնը նույն ինքը Վեհոտ գետն է, ապացուցվում է Փիսոփնի մասին «Աստվածաշնչի» և Վեհոտի մասին Սեբեոսի տվյալների զուգագրումովը:

Ծննդոց, Ի. 11—12 ասված է. «Անուն միումն Փիսովն. նա է որ պատէ զամենայն երկիրն Եւրասայ, անդ ուր ոսկին է. և ոսկի երկիրն այնորիկ ազնիւ. և անդ է սուտակն և ակն դահանակ»:

Իսկ Սեբեոսը Սմբատ Բագրատունու (Սոսրով Շում) և քուշանների պատերազմի վերաբերյալ հատվածում պատմում է, որ երբ քուշանները պարտություն կրելով փախչում են, «թագաւորքն քուշանաց խնդրեցին իւրեանց օգնական ի Մեծէն Սաքանայ արքայէ կողմանցն հիւսիսոյ: Եւ եկն ել ամբոխ և թւրոյ ի թիկունս աւգնականութեան նոցա, անց զգետոփն որ կոչի Վեհոտ, որ ելանէ ի Թուրքեստանէ յերկրէն Եւրասայ»⁴:

Ինչպես տեսնում ենք, այս երկու աղբյուրներում թե՛ Փիսոփն և թե՛ Վեհոտ գետերը հոսում են միևնույն երկրով՝ Եվրասիայի Իսկ Վեհոտ գետը, ինչպես ցույց է տվել Բ. Պատկանյանը, Միշին Ասիայի Ամու Դարյան է, կազմված պարսկերեն «Յ — «վեհ» և «յ», — «գետ» բառերից⁵:

Վեհոտի մասին՝ որպես միջին ասիական գետ, հիշատակություն կա նաև Սեբեոսի Պատմության Ը գլխում. «Եւ եղև ի ժամանակին յայնոսիկ Վահրամ ոմն Մերհեանդակ, իշխան արևելից կողմանց աշխարհին պարսից, որ հարկանէր բաշութեամբ իւրով զգաւրս Թետայացոց և բռնութեամբ ունէր զԲահլ և զամենայն երկիրն Գուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի, որ կոչի Վեհոտ և մինչև ցտեղին, որ կոչի Կազրիոն»⁶: Այս հատվածը համարյա նույնութեամբ անունների փոքր-ինչ այլ ընթերցումներով կա նաև Ստեփանոս Ասողիկի և Թովմա Արծրունու մոտ⁷:

¹ Տե՛ս «Энциклопедический словарь Брокгауза», հատ. 71, 1902, էջ 46:

² Լ. Տաշյան, Մայր ցուցակ ձեռագրաց, էջ 553:

³ Անդ, էջ 593:

⁴ Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, բազմատուրք ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Արմֆանի հրատ., 1939, էջ 67 (հետագայում՝ Սեբեոս...):

⁵ Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբն նորագիւտ պատմութեան Միսիթարայ Անեցոյ ի յոյս ած Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1878, էջ 199:

⁶ Սեբեոս, էջ 33:

⁷ Տե՛ս «Ստեփանոսի Տարոնացոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», 2-րդ տպ., Պետերբուրգ, 1885, էջ 112: Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տառն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 147:

3. Վերը հիշված հայ մատենագիրների մոտ Վեհոտ գետի հիշատակութունը կապվում է պարսից Որմիզդ 'Ի և նրա որդի Սոսրով Բ Ապրուեղ (Պարվիզ) արքաների ժամանակաշրջանին:

4. Արդ այստեղից էլ մենք հավանական ենք համարում, որ Մագիստրոսը միջինասիական Վեհոտ անունը փոխարինել է «Աստվածաշնչի» հանրահայտ Փիսոֆիով: Վեհոտ հորջորջմանը Մագիստրոսը կարող էր ծանոթ լինել իրեն քաջ հայտնի հայկական և օտար աղբյուրներից: Նա իր այս թղթի սկզբում իսկ հիշատակում է, որ բերված փաստերը ինքնահնար չեն, և ինքը դրանք քաղել է «աստուածեղէնք և անվաւերականք» մատյաններից¹: Իսկ Սոսրով անունով նա ակնարկել է Սոսրով Բ-ին, որի անվան հետ կապված գրույցները (հիշենք թեկուզ Սոսրովի և Շիրինի վեպը) լայն տարածում ունեն Մերձավոր Արեւ-վելքում:

5. Խնդրո առարկա գրույցը ենթադրել է տալիս, որ ձկան պաշտամունքը ընդունված է եղել նաև Միջին Ասիայում և ոչ մի առնչություն չունի Հայաստանի լեոներում հայտնաբերված քարակոթողների հետ: Իսկ որ ձկան պաշտամունքը ընդունված է եղել ոչ միայն Անդրկովկասում, ապացուցում է Հյուսիսային Մոնղոլիայում² Թուրան գետի մոտ, Սալանի լեոների հարավային կողմում հայտնաբերված քարակոթողը, որի վերին մասում պարզ երևում է ձկան քանդակ²:

6. Եվ ի վերջո, գրույցի իրանական բնույթին և ակնարկում ամրագրակ, սատեր և եազղաղովսս (եազղաղան?) «աստվածատուր» պարսկերեն բառերի օգտագործումը:

Վերը բերված բոլոր փաստարկումները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու.

1. Զրույցի մեջ հիշատակված Փիսովը Միջին Ասիայի Ամու Դարյա գետն է, որը հայկական աղբյուրներում պահպանվել է նաև Վեհոտ իրանական հորջորջումով:

2. Ամրահակ ձուկը ոչ տլլ ինչ է, և թե ոչ ակնարկ ձկան վիթխարիության մասին: Մեր աղբյուրներում շատ է գործածված Վիշապածուկ ձևը, որը և Մագիստրոսը փոխարինել է Ամրահակով:

3. Առասպելի մեջ հիշատակված Սոսրովը պարսից արքա Սոսրով Բ Ապրուեղն (Պարվիզն) է:

4. Մագիստրոսի մոտ պահպանված այս գրույցը միջինասիական-իրանական բնույթ ունի և ըստ երևույթին տեղի հին հավատքի արձագանքներից է, որը և հետագայում կցվել է Մերձավոր Արևելքում մեծ տարածում ունեցող Սոսրով Ապրուեղի անվանը, և նրա հետ կապված բազում գրույցներից մեկի բեկորն է:

¹ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», էջ 218:

² Տե՛ս Ե. Բ. Плотровский, Вишаны. каменные статуи в горах Армении, էջ 17: